

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ 1995 Թ. ՄԱՅԻՍԻ 28-ԻՆ, ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Մեծահրաշ այս խորհուրդ աւանդութեամբ առ մեզ հասեալ»:

Սրբազան շարականագիրը այսօրվա խորհրդի մասին հետևյալն է ասում. «Մեծահրաշ այս խորհուրդը ավանդությամբ մեզ հասած»:

Ի՞նչ է այսօրվա խորհուրդը, սիրելի հավատացյալներ: Այդ խորհուրդը Գրիգոր Լուսավորչի կյանքի հետ է կապված: Ինչպես մեր պատմությունից դուք գիտեք, Գրիգոր Լուսավորիչը, որպես մեղապարտ ընտանիքի Անակի որդին, որ Խոսրով Հայոց թագավորի սպանիչն էր, քրիստոնյա լինելու պատճառով Տրդատ Գ թագավորի կողմից տասը պատուհասների ենթարկվեց, պատիժներ կրեց և այդ պատիժներին դիմանալուց հետո նետվեց Խոր Վիրապի գուբը, որտեղ միայն մահվան դատապարտվածներն էին նետվում: Խոր Վիրապի գուբը իժերի, թունավոր սողունների, կարիճների մի վայր էր: Այնտեղ բանտարկվածները երբեք չէին ազատվում, սակայն Աստծու նախախնամությամբ ամեն օր, ինչպես Ագաթանգեղոս պատմիչն է նկարագրում, մի պառավ կին բերում էր սրբակրոն բանտարկյալին մի նկան հաց և մի փարչ ջուր:

Այսպես նա տասնչորս երկար տարիներ դիմացավ այդ բանտարկությանը, մինչև աստվածային հրաշքը տեղի ունենար: Այդ հրաշքը նրա գերեզմանից հարություն առնելն էր: Սուրբ Գրիգոր Լուսավորչի բանտարկության շրջանում այցելող այդ պառավ կինը Աստծու հրեշտակների ինը դասից չորրորդ դասին պատկանող մի հրեշտակ էր: Քրիստոսի համբարձումից չորս օր հետո, երբ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, բարձրացավ երկինք, այնտեղ հրեշտակների փառաբանության արժանացավ: Եվ երբ Գրիգորը չորրորդ օրը այդ պառավի, որի կերպարանքով հրեշտակն էր երևում, այցելությունը չունեցավ, հարց տվեց նրան հաջորդ օրը, թե արդյոք երեկ ինչո՞ւ չայցելեց: Հավանաբար նա շատ միայնակ էր զգում և զրուցակից էր փնտրում՝ գոնե մեկ-երկու բառ փոխանակելու համար: Եվ հրեշտակը իր դեմքը բացեց սրբի առջև՝ ասելով. «Երեկ մեր հրեշտակների դասի տոնախմբության օրն էր, որովհետև համբարձյալ Հիսուսին հրեշտակների ինը դասերը մեկ առ մեկ այցելում էին: Մեր խումբը՝ դասը, երեկ այցելեց: Նշանակում էր, որ այդ հրեշտակը չորրորդ դասին էր պատկանում հրեշտակների՝ տերության դասն էր այն:

Սիրելի հավատացյալներ, ահավասիկ մի փոքրիկ դրվագ. մեր պատմությունից քաղված, պատառ առ պատառ մեզ հասած, սակայն այդ փոքրիկ

դրվագի ետև ինչպիսի աստվածային, երկնային մի պատուհան է բացվում, որտեղից մենք՝ հավատացյալներս, Սուրբ Գրիգոր Լուսավորչի հետևողներս, այդ պատուհանից կարողանում ենք մի ակնարկ գցել երկնայինների կյանքին, թե ինչ կա և ինչ է կատարվում այնտեղ, թե հրեշտակները ինչպիսի ցնծությամբ և ուրախությամբ են դիմավորում երկնքում իրենց Տիրոջն ու Փրկչին:

Հրեշտակները հոգիներ են, մենք հավատում ենք նրանց գոյությանը, որովհետև հավատում ենք, որ մարմինն է նյութական և հոգին է ոգեղեն: Եթե մարմին և հոգի միասին կարող են ապրել, ուրեմն կարող է նաև գոյություն ունենալ հոգին առանձին, և մարմինը՝ առանձին: Մարմինը իր ցանկություններով մեզ դժոխք է տանում, իսկ հոգին՝ հավիտենականության, աստվածայինին, գեղեցիկին:

Այսօր, Համբարձման տոնին հաջորդող այս չորրորդ օրը, մեր եռամեծ հայրապետների կողմից կոչվել է նաև Երկրորդ Ծաղկազարդ: Առաջին Ծաղկազարդին, յոթներորդ կիրակին Մեծ Պահոց, Հիսուս իր աշակերտներով Երուսաղեմ մուտք գործեց՝ օվսաննաներով, երգով ու փառքով: Ժողովուրդը իր զգեստները փռեց նրա ոտքերի առջև, նրան ձիթենիների և արմավենիների ոստերով դիմավորեցին և գոչեցին. «Օվսաննա, փառք Տիրոջ, փառք նրան, որ Տիրոջ անունով է գալիս»: Իսկ այս կիրակին Եկեղեցին կոչել է երկրորդ Ծաղկազարդ, որովհետև Համբարձումից հետո Հիսուս փառքով Վերին Երուսաղեմ մուտք գործեց, ուր մարդկանց փոխարեն փրկված հոգիները՝ հրեշտակները, դիմավորեցին նրան, նրա փառքը վայելեցին, աստվածային նրա էության տեսությանը կարողացան արժանանալ:

Զարմանալի կերպով այս տոնախմբությունները զուգադիպում են մեր ազգային տոնախմբություններին: Երևակայեցեք, մայիս ամսվա վերջը՝ 451 թվականի. հայ ժողովուրդը իր գոյության մեծագույն պայքարը մղեց, պատերազմը մղեց Ավարայրում, ուր փորձում էին և՛ մեր հայրենիքը գրավել, և՛ մեր հոգին դատարկել աստվածային նոր կրոնի էությունից: Ավետարանն ասում է. «Մի վախեցեք նրանցից, որ ձեր մարմինը կարող են սպանել, այլ վախեցեք նրանցից, որոնք կարող են ձեր հոգին, ձեր գիտությունը, ձեր հավատքը ձեզանից խլել և սպանել ձեզ»: 451 թվականը այսպիսի ճգնաժամային շրջան էր: Մայիսյան այս օրերին Վարդան զորավարը իր արյունը թափեց, բայց կարողացավ իր սկզբունքները պահել և հայ ժողովրդին պահել իր հավատքով, անսասան և ամուր՝ մինչև մեր օրերը:

Զարմանալի կերպով մայիսյան այս օրերը զուգադիպում են նաև երկրորդ մեր թշնամու՝ մեր հոգին սպանելու ապառնացող թուրքի հարձակումներին: Երբ նրանք ավելի քան 1,5 միլիոն հայի արյուն թափեցին՝ տեղի ունեցավ 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը: Այնուհետև թուրքերը շրջվեցին դեպի Արևելք, որպեսզի մնացյալին հայկական ցեղի, որ ասսանդական ապաստանել էր այստեղ և հայ ժողովրդին, որ ապրում էր Արևելյան Հայաստանում, առանց իշխանության և տերության, բնաջնջեն: Նրանք փորձեցին գալ 1918 թվականի մայիսի 22-ի օրերին՝ սպանելու համար այդ հոգին, որ Հոգին է Հայկի և Արամի, սակայն, փառք Աստծու, մեր ժողովուրդը ծառացավ նրանց դեմ, հայկական բանակներ կազմեցին, Հայ Եկեղեցին իր ձայնը բարձրացրեց, կոչնակները ղողանջեցին, ողջ հայոց աշխարհից հավաքվեցին հայորդիները, որոնք միացան մեր զինվորներին: Գյուղացիները և քաղաքացիները, այր և կին, մեծ և փոքր գնացին դեպի

Սարդարապատ՝ այնտեղ դիմագրավելու համար թուրք հորդաներին և՛ Սարդարապատում, և՛ Բաշ-Ապարանում, և՛ Ղարաքիլիսայում, ինչու չէ՝ նաև Բաքվում: Եվ զարմանալի հրաշք, ինչպես շարականագիրն է ասում. «Մեծահրաշ այս խորհուրդ աւանդութեամբ առ մեզ հասեալ»:

Գրիգոր Լուսավորչի ունեցած հայտնության համար, նույն ձևով մեծահրաշ խորհուրդ տեղի ունեցավ, որովհետև մեր ժողովուրդը կարողացավ, հակառակ իր թվաքանակի փոքրության, կոտորակվածության, դիմադրել թշնամուն և հայրենի սահմանները ապահով պահել: 1918 թվականի մայիսի 28-ին Հայաստանը իրեն հռչակեց ազատ, անկախ Հայաստանի Հանրապետություն: Թեև 20-ական թվականներին այդ հանրապետությունն ընկավ, նոր իշխանություններ կազմավորվեցին, թեև հալածանքներ եղան անցնող այդ 70 տարիների ընթացքում, սակայն հայ ժողովուրդը, հակառակ դրան, աճեց, մեծացավ, ներգաղթեր տեղի ունեցան, կարողացավ երկիրը շենացնել, բազմապատկվել և 1991 թվականի հրաշքի ականատես վկան լինել:

1991 թվականի մայիսի 28-ին նորից Հայաստանի ազատ-անկախ Հանրապետությունը մարմին առավ, և այսօր մենք՝ ապրողներս, բախտավոր ականատես վկաներն ենք: Մենք մեր հայրերի, մեր նախնիների երազների իրականացումը տեսնող վկաներն ենք պատմության մեջ:

Այս անկախության տարիներին տեսանք, թե Աստված ինչպիսի հրաշքներ կարող է գործել: Աստված երկնքի դռները բացում է Սուրբ Գրիգորի և հայ ժողովրդի առջև: Մեր հողերը, որոնք ժամանակի ընթացքում կորցրել էինք, կամաց-կամաց, այո՛, արցախյան պայքարով մեր ժողովրդին են վերադարձվում:

Հայ ժողովուրդը ունի նաև իր անկատար երազները, որոնց իրագործման համար պետք է բազմանա, աճի և զարգանա, ուժեղանա և զորանա, որպեսզի ապագայում Աստծու օգնությամբ կարողանա իր իրավունքների տերը դառնալ:

Սիրելի հավատացյալներ, քիչ հետո Հանրապետական մաղթանք պիտի կատարենք այստեղ, աղոթենք մեր բոլոր անցյալորների, այն զորավարների հոգու համար, որոնք Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի ճակատներում մարտնչեցին. Նազարբեկյան, Սիլիկյան, Փիրումյան և ուրիշներ: Զմոռանանք նաև հոգևորականներին՝ Զավեն և Գարեգին սրբազաններին ու բազմաթիվ այլ վարդապետների, ովքեր ճակատ գնացին՝ մարտնչելու համար թշնամու դեմ: Զմոռանանք նաև Գևորգ Ե երջանկահիշատակ Կաթողիկոս Սուրենյանցին, որ չշարժվեց Մայր Աթոռից, երբ ապահովության համար իրեն առաջարկեցին Սևանի վանք գնալ՝ այնտեղ ապահով ապաստան գտնելու համար: Նա չշարժվեց Մայր Աթոռից, որպեսզի հայրենիքի զինվորները երբեք տեղի չտան, և հայրենի հողը ոտնակոխ չդառնա թշնամուն:

Այսօր մենք հավատում ենք, որ Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աթոռին արժանավոր գահակալ ունենք բազմած՝ հանձին Գարեգին Կաթողիկոսին Ամենայն Հայոց: Թող Աստված Սուրբ Գրիգոր Լուսավորչի, Գևորգ Սուրենյանց Կաթողիկոսի տեսիլքները պարգևի նրան, նրան տա Ահարոնի գավազանը, որպեսզի ծաղկի այն, Մովսեսի առաջնորդող գավազանը, որպեսզի մեզ առաջնորդի նոր և երջանիկ նավահանգիստներ՝ ի փառս Հայաստանյայց Եկեղեցվո և ի պայծառություն ազգիս Հայոց, այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն: